



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16613



323.1

4-23

Ա. 78, 34, 37

48

26 SEP 2006

Ա. ԿԵՐԵԶԿԻ

ELOS YAM D.S.

222

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

Ա.ԶԳԱՅՆՈՒԹԻՒՆ

ԹԱՐԳԱՐ. ՌԱԽԵԼԵՎԵԼԻՑ

ԴԱՐ. ՊԱՊՈՎԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
 Էլեկտրաշաբաթ ապարան „ՀԵՐՄԱՆ“ ընկերութեան
 1905
 (117)

20 MAY 2013

76613

Дозволено Цензурою 23 Июля 1905 г. г. Тифлисъ.

12753.52

Հազիւ թէ գտնւի մի բառ, որ այնքան մեծ ուեղ ունենայ գրաւած վերջին տարիների գերմանական քաղաքական բառարանում, որքան «ազգայնական» national բառը. հազիւ թէ գտնւի մի ուրիշ բառ, որ այնպէս մեծ ազգեցութիւն ունեցած լինի և ունենայ, որքան այդ բառը: Նացիոնալ-լիբերալները շատ լաւ են հասկանում, թէ ինչու իրանք այդքան ամուր են կազած այդ անւան: Եթէ Ամերիկայի հարաւային նահանգների ճորտատէրերը իրենց անւանում էին, «գեմոկրատներ», — հապա ի՞նչու ազնւականութեան այդ նեցուկները իրանց չ'անւանեն նացիոնալ-լիբերալներ: Այս բառի առաջին մասը — national հնչում է աւելի գրաւիչ, բան երկրորդը — liberal: Եւ դա միայն Գերմանիայում չէ այլպէս: Մեր հարևանները ոչ մի ջանք չեն խնայում, որպէսզի կարողանան ազգային աշխարհայեցողութեամբ հաւասարել մեզ, թէև ազգային մեծափառութեան խելացնորութիւնը ոչ մի տեղ այդ աստիճան չէր կարող զարգանալ, որքան գերմանական որոշ շրջաններում: Միևնույն ժամանակ — որ ամենից աւելի կոմիկական է — հէնց նրանք, որոնք պնդում են, թէ գերմանական ազգը միանդամայն գերազանցում է միւս

բոլոր ազգութիւններին — հէնց նոքա էլ գոռում
են, որ այդ ազգը քաղաքականապէս այնքան ահ-
օգնական, այնքան տհաս է, որ այդ բանում նրան
հաւասար ազգ հազիւթէ կարելի լինի գտնել, որ
նա անխուսափելի կերպով կ'ոչնչանաւ եթէ նրա
մէջ մնայ պարլամենտական կառավարութեան թէ
կուղ ստւերը:

Որ «ազգային» «ազգայնութիւն» բառերի
տակ յաճախ թագնուում է սովորական խարդա-
խութիւնը, որ ազգային ոգուն յաճախ վերագրում
են շատ և շատ այնպիսի երևոյթներ, որոնք իս-
կապէս ծնունդ են միանդամայն ուրիշ գործոն-
ների — դա անկասկած է: Բայց և այնպէս մեր բո-
լոր ասածները չեն կարող նսեմացնել այն փաստը,
որ ազգայնական դաշտափարը ահազին ազգեցու-
թիւն ունի ժամանակակից քաղաքակիրթ ժողո-
վուրդների վերայ, մի ազգեցութիւն, որը չի կա-
րելի բացատրել միայն արւեստական մախինա-
ցիայով: Զի կարելի հերքել և այն, որ մի քանի
կուսակցութիւններ, դրդած կուսակցական մի-
տումներից, շահագործում են ազգայնական գա-
ղափարը և այդ պատճառով աշխատում են որ-
քան կարելի է բարձրացնել նրա նշանակութիւնը:
Բայց եթէ մենք ազգայնական գաղափարի արմա-
տը վնասուելու լինենք կուսակցական գործունէ-
ութեան՝ այդպիսի ձեի մէջ, մենք նոյն սխալը ա-
րած կ'լինենք, ինչ սխալ գործում են և նրանք,
որոնք պնդում են, իբր թէ սօցիալիստական շար-

ժումը ոչ այլ ինչ է, եթէ ոչ. ինչ որ «ազիտա-
տորների» գործունէութեան արդիւնք, որոնք ու-
զում են կորզել բանտորի թշւառ կողէիները:

Ազգայնական գաղափարը չի կարելի համա-
քել գրչակների և պօլիտիկների ստեղծած մի բան:
Այդ գէափում արգեօք նա չի արմատացած հէնց
մարդկային բնութեան մէջ: Թերևս այս կամ այն
ազգին պատկանելը նոյնքան որոշ բան լինի որ-
քան և այս կամ այն բասային պատկանելը: Մեր
քուրժուա-իդեօլօգների մեծամասնութիւնը այս
հարցերին պատասխանում է դրականապէս: Բայց,
իսկապէս, ինչ կարող է աւելի ծիծաղելի լինել,
քան թերլինի մի պղօֆեսօր, իր ծագումով կէս
սլատօն, կէս ֆրանսիական հուգենոտ, գուցէ և սե-
միտական արեան մի փոքր խառնուրդովլ — որով-
հետեւ մեղնից ովկ կարող է հիմայ երաշխաւորել,
որ նրա երակների մէջ չի հսում այդ արեան
և ոչ մի կաթիլը — կը կնում ենք, ինչ կարող է ա-
ւելի ծիծաղելի լինել քան այն, երբ այդ պղօ-
ֆեսօրը ճառում է «մեր նախնիքների» մասին,
որոնք իբր թէ խերուսկների առաջնորդ Արմինի
հրամանատարութեամբ պատերազմ յայտարարե-
ցին «վիլական ժառանգական թշնամիներին» — մի
պատերազմ որ մինչև օրս էլ շարունակում է:
Որ ազգայնութիւնը երբէք չի հիմնում. բացա-
ռապէս ծագման վերայ, դրա ամենալաւ ապացոյց
կարող է լինել այն, որ միևնոյն ազգութեան մէջ
մանում են ոչ միայն տարբեր ցեղերին այլ և տար-

բեր ըասաներին պատկանող անհատներ։ Հունգարական ազգը բաղկացած է «արեացիներից», «սեմիտներից» և մօնդոներից։ Հրէական ազգն անգամ, որ ըստ երևոյթին միանգամայն խիստ բաժանւած է միւս բոլոր ազգերից, ներկայացնում է բազմազան տիպեր. մինչև անգամ նեղրտկան արիւն կայ նրանց մէջ։ Խսկապէս ումը չի զարմացրել շատ հրէաների զուս նեղրական շեվելիւրան։ Պէտք է նկատել, որ «սեմիտները» մի որոշ ազգ կամ բասայ չեն ներկայացնում. դա լեզւաբանական մի տերմին է, որը տրում է այն բոլոր ժողովուրդներին, որոնց լիգուները պատկանում են լիգուների այն ընտանիքին, որ էլլիզորնը անւանել է սեմիտական—այսինքն ունեն ուրոշ առանձնայատկութիւններ։ Բայց այդ լեզուները իւրացրին այնպիսի ժողովուրդներ, որոնք ծագումով միանգամայն տարբերում էին իրարից և չէք գտնի մի մարդ, որ կարողանար որոշակի ասել, թէ այդ ժողովուրդներից ո՞րոնք և որքան են պատկանում այսպէս կոչւած սեմիտական ցեղին։ Խսկ ինչ վերաբերում է սեմիտական բասային—դա մեզ համար կատարեալ անորոշութեան խաւարով ծածկւած մի զաղանիք է։

Քանի որ մարդկային հասարակութիւնները միացնող կապը հանդիսանում էր միայն արիւնակցութիւնը, «ազգը» այժմեան նշանակութեամբ գոյութիւն չ'ունէր։ Ազգերի փոխարէն մենք գըտնում ենք ցեղեր, որոնք իրենց կողմից ստորա-

բաժանուում են տոհմերի։ Անհատի այս կտմ այն ցեղին և տոհմին պատկանելը որոշում էր նրա ծագումով, ազգակցութեամբ և ոչ թէ ընակութեան վայրով։ Բայց երբ երկրագործութիւնը որեւէ ցեղի համար դառնում է արդիւնաբերութեան աիրապետող ձև և դրա շնորհիւ նոյն ցեղն էլ դառնում է նստակեաց, ընականաբար անհատի որոշ ցեղին պատկանելը սկսում է որոշել և նրա բնակութեան վայրը։ Այդպիսով առաջացած մանր համայնքները, մարդկերը հիմնուում էին որքան ծագման, նոյնքան և այն նորի նոյնութեամբ, որը մշակում էին։ Այդ համայնքները, ինչպէս և զանազան հովւական ցեղերը և տոհմերը գոյութիւն ունէին արտաքին աշխարհից միանգամայն անկախ և ինքնուրոյն։ Ինքը համայնքը արգիւնաբերում էր այն ամենը, ինչ անհրաժեշտ էր նրա իւրաքանչիւր անդամին, բացի շուայլութեան իւրերից, որոնք ստացւում էին դրսից։ Դրա շնորհիւ համայնքը միանգամայն առանձնանում է (Markgenossenschaft)։ Միայն երբեմն, արտակարգ վտանգի դէպքում այդ մանր համայնքները միանում են ընդհանուր, միացեալ գործունէութեան համար. վտանգի անցնելով այդ կապը և միութիւնը նորից քակտուում էր։ Ոչ թէ որեւէ ազգային միութեան, այլ մինչև անգամ ազգային լեզվի մասին խօսք անգամ չէր կարող լինել։ Տընտեսական մեկուսութիւնը նպաստում էր առան-

ձին ցեղական բարբառների և մինչեւ անգամ լեռների պահպանման և կազմւելուն:

Գերմանական պօլիտիկները և գիտնականները շատ են սիրում գանգատել գերմանացոյ «անհատականութեան» վերայ, որը անհատական շահերը գերադասում է ազգային շահերին և որը ուստառ եղաւ, Գերմանիայի Առմինի ժամանակներից մինչեւ օրս նկատւող, բաժանման և մանրացման: Ազգի այդպիսի մանրացումը չի կարելի համարել գերմանացիների ըասայական առանձնայատկութիւն. միևնոյն երեսոյթը նկատւում է այն բոլոր ազգերի մէջ, որոնց տնտեսական զարգացումը չի անցել որոշ սահմաններից այն կողմը: Այդ երեսոյթը բացարձակապէս ոչ մի կապ չունի նաև անհատականութեան հետ, որովհետև վերջինս այնքան աւելի խիստ և խոշոր չափով է երեան գալիս, որքան աւելի սերտ է կապւած մարդկը, տոհմը:

Քանի որ մանր համայնքները իրանք իրանց բաւարարութիւն էին տալի, քանի որ գոյութիւն չ'ունէին նիւթական շահեր, որոնք ստիպէին այդ մանր համայնքներին միանալ իրար հետ—մինչեւ այդ խօսք անգամ չէր կարող լինել ազգութեան մասին:

Այդ մերձեցումն առաջնորդ գործոններից ամենակարևորները երեքն են, որոնք ազգում էին կամ առանձին կամ թէ չէ միասին: Դոքա բոլորն էլ արդիւնաբերութեան միջոցների զարգաց-

ման հետեանք են: Առաջին տեղը բռնում է արտաքին թշնամիների գերակշիռ ոյժ՝, երկրորդ բնութեան գերազանց ոյժը, որի դէմ բաժան բաժան հաւմայնքները անկարող էին յաջողութեամբ կուր մղել, վերջապէս երրորդ, և մեր կարծիքով ամենազլիսաւոր գործոնն էր ապրանքային արդիւնաբերութիւնը և առևտուրը:

Քանի որ մի ցեղ, պլարապելով որսորդութեամբ, ձկնորսութեամբ և անամնապահութեամբ, վարում էր հովական կեանք, թշնամիներից պաշտուանւելու գործում նա այնքան էր մեծ կարիք չէր զգում միանալու միւս ցեղերի հետ: Այդպիսի ցեղը հազիւ թէ ունենար մի աչքի ընկնող հարստութիւն, որը զբաւէր հարևանների ուշադրութիւնը: Միակ բանը որ կարող էր առիթ տալ հարևան ցեղերի ընդհարման հանդիսանում էին կամ որսատեղերի և արօտատեղիների առմիւ ծագած վէճերը կամ վրէժինդրութիւնը: Բացի անմիջապէս մասնակցողներից հազիւ թէ գտնւէր և մի սրիշ ցեղ, որ շահագոգրւած լինէր այդ ընդհարումնիրում: Կուռող կողմները իրենց զինորական ոյժով, իրենց ճարպիկութեամբ համարեա հաւասար էին իրար, նոյն իսկ թւով երեքը ոչ մէկը չէր կարող առանձնապէս գերազանցել միւսին: Հակառակ դէպքում, երբ որևէ ցեղ ընդհարում էր խսկապէս գերազանց ոյժի հէտ, առհասարակ նրան մնում էր միայն մի ելք-ընտրել ուրիշ բնակավայր և տեղափոխւել, քանի որ նա

ոչնչով չէր կապւած որոշ տեղի հետ: Դրութիւնը միանգամայն փոխւեց, երբ երկրագործութիւնը, զարգանալով դարձաւ արդիւնաբերութեան տիրապետող ձև: Երկրագործ համայնքները իշխում են սարերից, դուրս են գալիս անտառներից և ընակութիւն հաստատում գետերի ափերին: Բարելաւում է նրանց նիւթական դրութիւնը, բազմապատկւում է ընակչութիւնը և մեծանում միւնոյն հողի վերայ ապրող համայնքների թիւը: Բայց մէկալը ունէր և հակառակ կողմէ: Այդ համայնքների հետզհետէ աճող հարստութիւնը առաջ է բերում վայրենի, թափառական հարևանների թալանիչ արշաւանքներ, որոնցից նստակեաց երկրագործը չէր կարող փախչել: Հարթութիւնները, ժայռոտ և անտառոտ տեղերի հետ համեմատած, պաշտանութեան աւելի քիչ յարմարութիւններ էին ներկայացնում: Վայրենի նոմազները միշտ պարապում էին զինավարժութեամբ, ունէին ձիաների իլիխներ, հմուտ էին ծովագնացութեան (որտեղ դա հարկաւոր էր և հնարաւոր) և այլն և այլն: Այդ ամենը պայմանաւորութուում էր նրանց մէջ տիրող արդիւնաբերութեան ձեռվլ—երկրագործութեամբ պարապում էին կանայք: Իսկ նստակեաց երկրագործների համար զինավարժութեամբ զբաղւելը նշանակում էր դադարեցնել արդիւնաբերութիւնը. Նոմազները զինավարժութեան կարող էին նւիրել աւելի շատ ժամանակ քան երկրագործները և ընական է, որ նրանց

զինւորական ոյժը գերազանցէր երկրագործների զինւորական ոյժին: Այդ պատճառով մենք տեսնում ենք, որ մանր երկրագործ ժողովուրդները միշտ ենթակայ են նոմազների թալանիչ յարձակումների: Այս բոլորը, ինչ կրեցին գերմանացիների հոնների, աւարների, հունգարացւոց և նորմանների կողմից—այդ բոլորը, նոյնպիսի պայմաններում կրեցին նաև չինացիք, հնդիկները, եգիպտացիք և Միջագէտքի բոլոր ժողովուրդները հարիւրաւոր և հազարաւոր տարիներ առաջ: Նմանօրինակ յարձակումները ստիպում են երկրագործ համայնքներին միանալ իրար հետ ընդհանուր թշնամուն դիմադրելու նպատակով և իրանց զինւորական ոյժերը գնել մի ընդհանուր առաջնորդի իրաւասութեան տակ: Այդ յարձակումների յաճախակի կրկնութեան դէպքում միութիւնը դառնում էր մշտական և նրանց առաջնորդը պահպանում էր իր իշխանութիւնը նաև խաղաղ ժամանակ: Այդպիսով զանազան համայնքների միութիւնը և կապը դառնում է մշտական, փոխադարձ յարաբերութիւնները,—կենդանի, որի չնորհիւ աւելի ևս մօտենում են իրար նրանց բարբառները և աճում համերաշխութեան ոգին. առանձին բարբառները տեղի են տալի ազգային լեզվին, իսկ համայնական պարտիկուլիարիզմը—կենդրոնական իշխանութեան: Այսեղ արդէն մենք տեսնում ենք այսպէս կոչւած ազգայնութեան սաղմը:

Որոշ ցեղերի մօտ, զուցէ աւելի՝ զօրեղ աղպեցութիւն ունէր վերը յիշած գործոններից երկրորդը—բնութեան դէմ մղած կոփւը։ Երբ երկրագործ ցեղերը իջնելով սարերից և անտառներից բնակութիւն հաստատեցին գետերի ափերին, նրանք միանգամայն կապւեցին գետի, ջրի հետ։ Գրտը դորձաւ նրանց մէջ մի տեսակ աստւած, որ ըստ իր հայեցողութեան կարող էր ուղարկել նրանց և ամեն տեսակ բարիքնէր և կատարեալ կորուսա։ Այսօր հեղեղն է ոչնչացնում երկրագործի բոլոր յոյսերը, մի քանի ամսից յետոյ երաշտն էր այրում նրա ցանքսը։ Անօդնական մնացած, նա դիմում է աղօթքներին, բայց փորձը, վերջ ի վերջոյ, ծանօթացնում է նրան աւելի խելացի միջոցների հետ։ Նկատեցին որոշ յաջորդականութիւն երաշտի և ջրերի վարարման ժամանակների մէջ, նոքա գտան նոյնպէս այդ երեսոյթների և աստղերի դասաւորութեան մէջ եղած կապը։ Աստիճանաբար մարդիկ սովորեցին կանոնաւորել գետերի ջրի մակերևոյթը նոյնպէս ջրաբաշխական շինութիւններով։ Այդ բանը պահանջում էր գետափեայ բնակիչների նախագըծած, միացեալ աշխատանք։ Այդպիսով, գետի դէմ մղած կոփւը, ինչպէս և արտաքին թշնամիների դէմ մղած պատերազմները, ստիպում է առանձին համայնքներին միանալ, իրենց բանւոր ոյժերը դնել մի ընդհանուր կառավարութեան տակ և հպատակւել կենդրոնական իշխանութեան։ Այդ

ուղղութեամբ էին զարգանում և աղղային ընդհանրութեան սաղմերը։

Եւրօպայում, արևելքի հակառակ, քաղաքակրթութիւնը գետերի ափերին չի զարդանում։ Երաշտները և հեղեղները այստեղ այնքան էլ ահռելի չէին ինչպէս արևելքում, մանաւանդ նախնական շրջաններում, երբ լեռները ծածկւած էին անտառներով, որոնք և կանոնաւորում էին գետերի ջրերը։ Այդ պատճառով գետի դէմ մղած կուրի միացնող ազդեցութիւնը առանձնապէս աշքի է ընկնում արևելքում։ ըստ երեսյթին դա էր և հին քաղաքակիրթ պետութիւնների ծագման նիւթական գլխաւոր պատճառներից մէկը։ Դրա մասին մինչև օրս պահպանւել են յիշողութիւններ աւանդութիւնների մէջ։

Եգիպտական թագաւորութեան հիմնադիրը համարւում է Մենեսը։ Բայ Հերոդոտի, որին պատմել են Եգիպտական քուրմերը, Մենեսը կառուցել է Նեղոսի վերայ, Միմֆիսից հարիւր ասպարէզ հեռու մի ամբարտակ. և այդպիսով, փոխելով գետի հոսանքը, ուղղել է նրան երկու շարք լեռների միջով, դէպի նոր գետաբերան։ Ամբարտակով պաշտպանւած հողի ցամաքելուց յետոյ, նա այդտեղ հիմնել է մի քաղաք, որը այժմ (այսինքն Հերոդոտի ժամանակ) կոչւում էր Մեմֆիս։ Քուրմերը պատմել են նոյնպէս, որ Մենեսը քաղաքի հիւսիսային և հարաւային կողմերում փորել տւեց արհեստական լճեր և լցրեց գետի ջրով։

Դա մի ահազին ամբար էր, որ լցւում էր ջրերի արատութեան ժամանակ և որի ջրով երաշտի ժամանակ որոգում էին արտերը։ Այսպէս կոչւած Մերիդեան լիճը նոյնպէս այդպիսի մի ամբար էր։ Նմանօրինակ երեսոյթ նկատուած է նաև Զինաստանում։ Մենցին, որը ապրել է Կոնֆուցիոնյականութեանոյ հաղորդում է հետեւեալը։ «Իանի (առ) ժամանակ, երբ պետութիւնը դեռ ևս կազմակերպւած չէր, գետերը դուրս եկան իրանց ափերից։ Երկիրը ծածկեց առատ բոյսերով և ծաղիկներով, ամեն տեղ թուչունների և վայրի գազանների առատութիւն էր։ Միայն 7 պտուղ չէր բանում։ Թըռչունները և վայրենի գազանները յաղթահարում էին մարդուն։ Միմեանց ամեն ուղղութեամբ իրար կտրող նեղ ուղիները, որոնց հարթել էին վայրենի թուչունները և գազանները, ծածկել էին Միջին թագաւորութիւն։ Իուն (Ա) (թագաւորութեան հիմնադիրը) բաժանեց Նօի (No) 9 ճիւղերը, մաքրեց Յի և Տա գետերի բերանները և ուղղեց նրանց դէպի ծովը։ Նա շինեց իւ և Նան (Nan) գետերի համար ակունքներ, կանոնաւորեց Գվայ և Սցի (Sz) գետերի հոսանքը և ուղղեց նրանց դէպի կիանգ։ Երբ նա այս բոլորը արեց Միջին թագաւորութեան բնակիչների գոյութեան միջոցները ապահովւեցին։ Յայանի է նոյնպէս Տիգրիսի, Եփրատի ինչպէս և Գանգի հովիտներում գոյութիւն ունեցող բոլոր պետութիւնների վերաբերմամբ, որ նրանց ծագման նիւթական հիմունքը

եղել են ջրերը կանոնաւորող ջրաբաշխական շինութիւնները, որոնց վերայ և գարձրած էր թագաւորների գլխաւոր ուշադրութիւնը և խնամքը։ Մինչ վերջին ժամանակները անդղիացիները չէին ուղում ճանաչել իրենց այդ պարտականութիւնը, որով բացատրում են յաճախակի սովերը ու համաձարակ հիւանդութիւնները։ Անգղիացոց տիրապետութիւնը հիմնած էր ոչ թէ նրանց տնտեսական գերիշխանութեան, այլ զինւորական ոյժի վերայ։ Գետի և արտաքին թշնամիների դէմ մըզած միացեալ կուփի ազդեցութիւնը աւելի ևս զօրեղ էր լինում, երբ այդ երկուան էլ տեղի էին ունենում միաժամանակ։ Բայց և այնպէս միայն այդ երկու գործոնները անկարող էին ստեղծել ազգային կեանք (ժամանակակից մտքով), որովհետև նորա չէին կարող վերացնել գիւղական համայնքների կամ մարկերի տնտեսական մէկուսութիւնը։

Որքան աւելի յաճախ էին կրկնուում արտաքին պատերազմները, որքան աւելի դժւար էին լինում ջրերի կանոնաւորման համար ձեռնարկած աշխատանքները, այնքան աւելի մեծ ոյժ և նշանակութիւն էր ձեռք բերում կենդրոնական իշխանութիւնը¹) ի հաշիւ առանձին համայնքների։

¹⁾ Մեր կարծիքով այդ իշխանութիւնը անցնում էր ոչ թէ առանձին անհատների ձեռքը, այլ ստանձնում էին համայնքները, որոնք գտնուում էին աւելի լաւ պայմաններում, ինչպէս օնուրեալ Մեծպիսը—որ գտնուում էր նեղոոի ամբարտակի և ջրուհիների մօտ, կամ թէ չէ ուրիշ համայնքների հետ համեմտած մրարի մօտ, կամ թէ չէ ուրիշ համայնքներից վերջերս ծագում է մայրաքաղաքը։

Միանգամ ընդ միշտ որոշւում է աշխատանքի ե
բնական տուրքերի քանակը, որ ծառայում էր
իրեկ բանտորների վարձ, այնովէս որ համայնքնե-
րը պարտադիր էին վճարել այդ հարկերը մինչև
անգամ կարիք չ'եղած դէպքում։ Զբարաշխական
շինութիւնների չնորհիւ հողը աւելի ևս պարար-
տանում է, որ իր կողմից նպաստում է ընակ-
չութեան և համայնքների թւի աճման։ Այդպի-
սով կամաց կամաց երևաց, որ միացեալ համայնք-
ների տուրքերից գոյանում է բանտորական ոյժի
և ապրուստի միջոցների աւելնորդ, որ կենդրո-
նական իշխանութիւնը գործադրում էր իր բարե-
հայեցողութեան համաձայն և ծառայեցնում իր
շահերին։ Բնականաբար կենդրոնական իշխանու-
թիւնը աղատ մնաց որևէ աշխատանքից և կազմեց
արիստոկրատեա, որը կենդրոնական իշխանութան
ֆունկցիաների համաձայն, բաղկացած էր զինւո-
րականներից, ճարտարագետներից և աստղագէտ-
ներից։ Մինչև օրս գոյութիւն ունեցող բուր-
գերը, ցոյց են տալիս, թէ որքան մեծ քանա-
կութեամբ աւելորդ բանտորական ոյժ և ապրուս-
տի միջոցներ էին անցնում կենդրոնական իշխա-
նութեան ձեռքը։ Անկասկած այդ գարգացումը չէր
կարող կատարել խաղաղ կերպով։ Եթէ կենդրո-
նական իշխանութիւնը աշխատում էր որքան կա-
րելի է մեծացնել առանձին համայնքներից ստաց-
ւող տուրքերը, համայնքներն էլ իրենց կողմից,
ընդհակառակը, ձգտում էին եթէ ոչ պակասեցնել,

գոնէ պահպանել գոյութիւն ունեցող չափը։ Իսկ
կենդրոնական իշխանութեան վերջնական տա-
պալման մասին ոչ ոք չէր էլ մտածում. այդ բա-
նը սպառնում էր խոշոր չափով վտանգել այն ժա-
մանակւայ ամբողջ տնտեսական կեանքը։ Այս
հիմնական փաստը բացատրում է արևելքի բոլոր
քաղաքակիրթ ժողովուրդների ամբողջ պատմու-
թեան բնոյթը։ Առանձին կոմմունիստական եր-
կրագործ համայնքները ապրում էին միանդամայն
ինքնուրոյն, ամեն մէկը իր համար. ամբողջ դա-
րեր նրանց արդիւնաբերութեան միջոցները մնում
են անփոփոխ. անփոփոխ են մնում հետեւալէս և
նրանց սօցիալական կազմակերպութիւնները։ Քա-
նի որ տուրքերի քանակը մնում էր միևնոցնը և
կանոնաւոր խնամք էր տարւում անհրաժեշտ շինու-
թիւնների վերայ, գիւղացիները ապրում էին մըշ-
տական միակերպութեան մէջ, վճառելով սահմա-
նած տուրքերը և տասանորդը։ Թագաւորը, կայսրը
կամ սուլթանը կարող էր լինել և՛ բարի և արիւ-
նարու, և՛ ժլատ և շուալ, և՛ անբարոյական և
ժուժկալ. նա կարող էր վարւել իր շրջապատողնե-
րի հետ ինչպէս կամենարերկը ագործի համար
դա միևնոցն էր։ Բայց եթէ բարձ ի թողէին ան-
ուում անհրաժեշտ շինութիւնները կամ աւելաց-
նում էին տուրքերը, նոքա իսկոյն գլուխ էին
բարձրացնում և հէնց առաջին թեկնածուի երևան
գալուն պէս միանում էին նրա հետ և գահ բար-
ձրացնում։ Այդպիսի գոյն են կրում արևելքի բո-
2
12253.57

յոր յեղափոխութիւնները։ Այստեղ հարցը ոչ թէ կառավարութեան ձեի մէջն է—այլ միայն կառավարչի անձնաւորութեան և առուրքերի քանակի։ Տիրող կառավարչական ձեի անհրաժեշտութիւնը ոչ մի կասկածի չէր ենթարկում։ Արդիւնաբերութեան գոյութեան համար կենդրոնական իշխանութիւնը անպայման անհրաժեշտ էր։

Ի միջի այլոց նկատենք, որ նախնական արիստօկրատիաները, որոնց ձեռքին գտնուում էր կենդրոնական իշխանութիւնը—միայն յաճախ ունենալով լոկ անւանական զլուխ—զինորական և մոգական կաստաները—տնտեսական անհրաժեշտութեան ծնունդ էին։ Մեր տափակ «քաղաքակըրթութեան պատմագիրները» առհասարակ պատմում են, որ մարդկային սկզբնական հաւասարութիւնը խախտւել է նըանով, որ հասարակութեան զօրեղ անդամները մի գեղեցիկ (օր հաւաքւել են և ասել թոյլերին—հպատակւեցիք մեղ, ապա թէ ոչ ձեղ բոլորին էլ կ'ոչնչացնենք։ Անկասկած արևելքան բռնապետութիւններում տիրողարիստոկրատիաները եղել են օտարազգիներ, նւաճողներ։ Բայց մի օտար ցեղ կարող էր նւաճել միայն այն, ինչ գոյութիւն ունէր։ Նա կարող էր իր ձեռքը ձգել կենդրոնական իշխանութիւնը միայն այն գէպում, երբ այդ իշխանութիւնը գոյութիւն ունէր։ Փողովուրզ հպատակւում էր կենդրոնական իշխանութեան, չնայելով որ նա անցել էր օտարի ձեռքը, որովհետեւ դրանով իրերի դրութիւնը չէր

փոխում։ Տիրողները և տիրուածները շուտապէ ձուլւում էին և կազմում մի ազգ, որովհետեւ երկուարն էլ միկնոյն տնտեսական օրգանիզմի մասերն էին։ Բայց երբ տիրողները բաւականանում էին երկիրը շահագործելով, առանց կենդրոնական իշխանութեան պարտականութիւնները վերցնելու իրանց վերայ, այդ գէպքում նոքա միշտ մնում էին խորթ և օտար տիրուածների համար, որոնք և միշտ, նաարաւոր եղած գէպքում զլուխ էին բարձրացնում, մինչև որ կամ ազատում էին լիապէս, կամ վերջնականապէս ընկնում։ Եղիպտացիք շատ անգամ են կրել օտարի լուծը։ Իսկ գիշաերին, ընդհակառակը, նոյն Եղիպտացիք ցոյց տվին ամենախիստ ընդիմագրութիւն։ Մեր պատմագիրների կարծիքով զիկսերը ստանձնեցին Եղիպտասիսի կառավարութեան զէկը ճիշտ այն ճանապարհով, ինչ ճանապարհով և ծագեց ու զարգացաւ արիստօկրատիան։ Բեղուինների այդ խուժաները, ներս խուժեցին Եղիպտոս և սկսեցին վարել ինչպէս նւաճւած երկրի հետ։ Նոքա շահագործում էին այդ երկիրը, իոկ կառավարելը նրանց ոյժերից բարձր էր։ Դրանով է բացատըրւում այն զօրեղ ընդիմագրութիւնը, որը ցոյց տվին Եղիպտացիք, մինչև որ յաջողւեց վերջնականապէս դուրս քշել նըանց երկրից։ Նոյն երկոյթն է նկատում և նորմանների վերաբերմամբ։ Ամբողջ դարեր նոքա շարունակ կողոպտում և թալանում էին արևմտեան քրիստոնեայ

երկրները, բայց և այնպէս նրանց ոչ մի տեղ չը-
յաջողւեց հաստատ հիմքերի վրայ դնել իրենց
իշխանութիւնը: Որպէսզի նորմանները կարողա-
նային այդ երկրների (հիւսիս-արևմտեան ֆրան-
սիայի և Անգլիայի) իսկական տէր դառնալ, այն
աստիճանի պէտք է քաղաքակրթւէին, որ կարողա-
նային կատարել ֆեոդալի բոլոր պարտականու-
թիւնները: Բայց նախ քան քաղաքակրթւէլը նո-
քա ձուլւեցին տեղացիների հետ: Ի հարկէ չի կա-
րելի բացառել, որ կենդրոնական իշխանութեան
միահեծանութիւնը և անկախութիւնը աւելի արագ
զարգացաւ այն երկրներում, որտեղ այդ իշխա-
նութիւնը ստանձնեցին օտար տիրող ցեղերը, քանի
այն երկրներում, որտեղ նա մնաց միացեալ հա-
մայնքների ձեռքում: Բայց այդ իշխանութիւնը բոլ
նւաճման ակտով չէր ստեղծում: Արևելեան քա-
ղաքակրթ պետութիւնների արիստօկրատիանե-
րը մոռանալով իրենց օտարազգի լինելը, հանդի-
սանում էին ազգային կենաքի միակ ներկայա-
ցուցիչներ, ի հարկէ այն չափով, ինչ չափով այդ
կեանքը գոյութիւն ունէր: Նոքա, մանր համայնք-
ների անդամների հետ համեմատած աւելի բարձր
էին կանգնած և դրա շնորհիւ սկսում են իրենց
համարել ազգի ներկայացուցիչներ և տէրեր: Նո-
քա մշակեցին ազգային լեզու, ստեղծեցին ազ-
գային գրականութիւն, ազգային փիլոսոփիայու-
թիւն և գեղարւեստ:

Բայց ազգային կեանքի այդ սաղմերը սահ-

մանափակւում էին ժողովուրդի որոշ մասով: Նո-
քա տարածում էին միայն արիստօկրատիայի,
կենդրոնական իշխանութեան բնակավայրի և քաղա-
քային ազատ բնակչութեան մէջ: Գիւղացու հա-
մար, առաջւայ նման իր մարկից և համայնքից
դուրս ոչինչ գոյութիւն չ'ունէր: Այժմեան հասկա-
ցողութեամբ ազգային կեանք ստեղծելու համար,
անհրաժեշտ էր ոչնչացնել համայնքը, թուլացնել
այն բոլոր տնտեսական կազմակերպութիւնները,
որոնք բաժանում էին անհատին—ազգից, այն-
պէս որ ազգը դառնար ժողովուրդի ամբողջ տըն-
տեսական կեանքը կանոնաւորող մի կազմակեր-
պութիւն: Սկզբնական համայնքները սկսում են
վկւել, երբ ազգանքային արդիւնաբերութիւնը և
փոխանակութիւնը հասնում են որոշ աստիճանի
զարգացման: Այդ գէպքում էլ ժամանակակից ազ-
գայնութեան ծագման համար անհրաժեշտ էին
դարձեալ որոշ պայմաններ: Առետուրը այն աս-
տիճան պէտք է զարգանար, որ նըանով զբաղւէր
մի ամբողջ դասակարգ-վաճառականական դասա-
կարգը: Այդ բանը Արևելքում տեղի ունեցաւ ա-
ւելի վաղ քան Եւրոպայում: Ապրանքային արդիւ-
նաբերութիւնը և փոխանակութիւնը տեղի էր ու-
նենում զիմաստորապէս այն տեղերում, որտեղ առաջ
գտնուում էր կենդրոնական իշխանութիւնը, որտեղ
հաւաքւում էր բանուորական ոյժի և ապրուսափ
միջոցների աւելնորդը, որոնք և նպաստում էին
շոայլութեան զարգացման: Այդ տեղերը դառ-

նում են ինչպէս տեղական, նոյնպէս և օտարերկրեայ ապրանքների համար շուկաներ: Թէև կենդրոնական իշխանութեան բնակավայրի օրըստօրէ աճող հարստութիւնը գրգռում էր հարևան վայրենի ցեղերի ճաշակը, բայց այդ իշխանութեան ճարտարապետները, որոնց տրամադրութեան տակ գտնւում էին բաւական թւով պարտադիր բանւորներ, կարողացան շուկան պաշտպանել պարիսպներով: Այդ պարիսպների շնորհիւքաքաքում արդիւնաբերութիւնը և առևտուրը կարող էին ազատօրէն զարգանալ և եթէ այդ քաղաքը գտնւում էր առևտրական ճանապարհի վերայ նա արագութեամբ սկսում է ծաղկել:

Արդիւնաբերութեան և առևտուրի այդ զարգացումը նկատւում է միայն քաղաքներում՝ իսկ այդ զարգացման միակ խթանը հանդիսանում էր այդ քաղաքների շահագործումը կենդրոնական իշխանութեան ձեռքով: Քանի որ կենդրոնական իշխանութիւնը բարեխզազութեամբ կատարում էր իր հնաւանդ պարտականութիւնները, գիւղացին բոլորովին չէր հետաքրքրուում, թէ ուր են գնում արդիւնաբերութեան աւելնորդը, միւս կողմից զիւղացին անմասն էր այդ աւելնորդից առաջ եկած անտեսական զարգացման: Այդպիսով մենք առևտում ենք, որ գեռ հազարաւոր տարիներ առաջ առևտուրը և արդիւնաբերութիւնը արևելեան պետութիւններում հասել էր բարձր աստիճան զարգացման. իսկ արդիւնաբերութեան որոշ ճիւղերը մին-

չև անգամ մեր ժամանակները չի հասել այն աստիճանի զարգացման, որի վերայ նոքա կանգնած էին Եղիպատուռամբ: Երկրագործական տնտեսութեան մէջ սկզբնական կոմունիստական համայնքը մինչև մեր օրերը պահպանել է իր ոյժը ի հարկէ այն չափով, ինչ չափով նա չի ենթարկել Եւրօպական կապիտալիզմի ազդեցութեան:

Միանգամայն ուրիշ ազդեցութիւն ունեցաւ ապրանքային արդիւնաբերութիւնը և առևտուրը Եւրօպայում: Այստեղ գոյութիւն չ'ունէր մարդոց յաղթահարող բնութեան այն ոյժը, որ անխուսափելի կերպով պէտք է ստեղծէր ուժեղ կենդրոնական իշխանութիւն: Եւրօպայի բնութիւնը, համեմատաբար այնքան առատ չէր, որ Երկրագործը ստանար այնքան մեծ քանակութեամբ արդիւնքներ, որից, իր անմիջական պահանջների բաւարարութիւն տալուց յետոյ, գոյանար և աւելնորդ: Անպարաբար հողը չէր կարող այնքան էլ գրաւիչ լինել վայրենի ցեղերի համար: Իսկ եթէ, չ'նայելով դորան, այնուամենայնիւ տեղի էին ունում յարձակումներ հողի քչութեան և ժողովուրդի աղքատութեան շնորհիւ—մենք աչքի առաջ ունենք առանձնապէս Յունաստանը—յարձակուղները աւելի շուտ ոչնչանում էին, բայց թէ շահուում: Այստեղ գոյութիւն չ'ունէին այն տարբերը, որոնք ստեղծում էին Արևելքի մեծ գետերի հոսքին արդիւնաբերութիւններ՝ և զարգիւններում խոշոր բնակետութիւններ՝ և զարգացման նրանց քաղաքներում առևտուրը և արգացնում

պիւնաբերութիւնը: Եւրօպայում առևտուրը և արդիւնաբերութիւնը զարգանում էին չափից դուրս դանդաղ, այն էլ արևելքի ազդեցութեան տակ, և նրա հետ ունեցած յարաբերութիւնների շնորհիւ. դորա փոխարքէն եթէ որևէ տեղ մուտք էին դործում առևտուրը և արդիւնաբերութիւնը, այնտեղ դոցա ազդեցութիւնը տարածում էր ամբողջ ժողովուրդի վերայ: Վերին աստիճանի հետաքրքիր կ'լինէր հետեւ և տեսնել այդ գործունների ազդեցութիւնը կլասիկ ժամանակներում: Բայց դա դուրս է մեր ծրագրի սահմաններից—նախ որ կլասիկ անցեալի զարգացումը ընթանում է միջին դարերի յետագայ զարգացման հետ համարեայ գուգընթացաբար, երկրորդ—այդ զարգացումը նչ Արևելքում և ոչ էլ Արևելմուտքում չ'կարողացաւ ստեղծել բարիս բուն նշանակութեամբ ազդային կեանք: Ճիշտ է նա Արևելմուտքում վերացրեց նախնական համայնքները, բայց դրա հետ միասին ոչնչացրեց և հասարակութիւնը, անկարող լինելով ստեղծել վերջինիս համար նոր յենակէտեր: Հասարակութիւնը դադարում է կենդանի օրգանիզմինելուց, երբ համայնքները սկսում են կորցնել իրենց առանձնութիւնը: Նա դառնում է մի դիակ, որը շարունակում է տարրալուծել և կայսրութեան շըջանում: Պահպանւեց ճորտատիրութիւնը, որի շնորհիւ բանւորը մնաց ազգից դուրս: Աղջր, որչափ դա կարելի էր ազդ անուանել, դարձաւ վերին և ստորին խաժամուժից բաղկացած

շահագործողների մի հրոսակ, մի կողմ կանգնած էր աղքատ պրօլէտար եստոր, միւս կողմը հաստափոր փողատէրերը: Այդ միևնոյն զարգացումը բոլորովին հետևանքներ ունեցաւ միջին դարերում: Այստեղ, այլ դորանից ծագեց ժամանակակից ազգայնութիւնը: Միջնադարեան մարկը, ինչպէս և օրինակ Հնդկաստանի գիւղական համայնքը, միանգամայն անկախ էր թէ քաղաքականապէս և թէ անտեսապէս: Այստեղ էլ, ինչպէս և արևելքում, մանր համայնքները, արտաքին թշնամիների և մասամբ բնութեան տարրերքի գէմ մղած միացեալ կուի շնորհիւ, միանում են և կազմում մի մեծ պետութիւն: Բացի նրանից, որ այստեղ այդ երկու գործոնների ազդեցութիւնը ինքնըստինքեան համեմատած Արևելքի հետ, աւելի թոյլ էր, կողմնակի պայմաններն էլ, նամանաւանդ նոր պետութիւնների հոռմէական աստառը աւելի ևս թուլացնում էին այդ ազդեցութիւնը: Եւրօպայում չէին կարող կազմել այնպիսի ուժեղ կենդրոնական իշխանութիւններ ինչպէս Արևելքում, և արդիւնաբերութեան այն աւելնորդը, որ գըտնում էր տիրող դասակարգերի տրամադրութեան տակ, իրենց պարտականութիւնները կատարելու համար (գիւղացիներին զինւորական ծառայութիւնից և կառավարչական հոգսերից ազատել) այնքան մեծ չէր: Այստեղ միայն աստիճանաբար, կամաց կամաց զարգանում է առևտուրը և իսկապէս բարձրացնելու առաջնական համար (գիւղացիներին զինւորական ծառայութիւնից և կառավարչական հոգսերից ազատել) այնքան մեծ չէր: Այստեղ միայն աստիճանաբար, կամաց կամաց զարգանում է առևտուրը և իսկապէս բարձրացնելու առաջնական համար (գիւղացիներին զինւորական ծառայութիւնից և կառավարչական հոգսերից ազատել)

նոյնպիսի դանդաղութեամբ է զարգանում այստեղ և ապրանքների արհեստաւորական արդիւնաբերութիւնը: Ինչպէս առևտուրը, նոյնպէս ապրանքային արդիւնաբերութիւնը կենդրոնանում էին առանձնապէս յարմար տեղերում, որոնց շրջապատում էին պարիսպներով, թշնամի և վայրենի ցեղերի յարձակումներից պաշտպանւելու համար: Այդպիսով առաջ եկան քաղաքները: Արհեստաւորական արդիւնաբերութիւնը սկսում է զարգանալ, դրա հետ միասին աճում է և արհեստաւորների թիւը: Մի կողմից աւատականների, միւս կողմից քաղաքային բնակչութեան զանազան մասերի իրար դէմ մղած կոփեների շնորհիւ այնքան ուժեղացան քաղաքները, որ նոքա այլ ևս կարիք չէին զգում ոչ աւատական տիրոջ կառավարութեան և ոչ էլ նրա հովանաւորութեան: Նոքա ամենին կարիք չէին զգում վարձատել ֆէօդալին այն պարտականութիւնների համար, որ հէնց իրենք քաղաքացիք աւելի լաւ կարող էին կատարել: Մինչդեռ գերմանական գիւղական մարկը, պետական իշխանութեան հետ ունեցած իր յարաբերութեամբ, միանգամայն մօտենում էր արևելքի գիւղական համայնքին, քաղաքներում, որտեղ մեծամասնութիւնը կազմում էին արհեստաւորները, ընդհակառակը տիրում էր միանգամայն ուրիշ ողիք Շնորհիւ այն հանգամանքի, որ քաղաքները չէին կարող անտարբերութեամբ նայել, թէ ինչպէս են տիրողները կառավարում երկիրը — այնտեղ ծա-

գում է ազգային կեանքի սաղմը: Քաղաքները արդէն ձգտում են ձեռք բերել որոշ ազդեցութիւն կառավարութեան վերայ — մի բան, որ գիւղական համայնքների համար նոյնքան հեռու էր, որքան և երկնքի աստղերը:

Ի հարկէ այս դէպերումն էլ առաջնակարգ տեղ բռնած ունէր ոչ թէ ազգը այլ համայնքը, միայն թէ համայնական կեանքի սահմանները աւելի և աւելի լայնանում էին: Արհեստաւորական արդիւնաբերութեան զարգացման հետևանքը եղաւ այն, որ քաղաքային համայնքը սերտ կերպով կապւեց սահմանակից գիւղական շրջանի հետ, լայնացրեց իր շահերը և ուժեղացաւ: Առոիճանաբար քաղաքները ուժեղանում են. կար ժամանակ, երբ, կարծէք, ամբողջ Եւրօպան պէտք է գառնար քաղաքային հասարակապետութիւնների մի կօնվլօմերատ (conglomérat): Այնուամենայնիւ այդ տեհնդենցիան չ'կարողացաւ ընդունել լայն չափեր մինոր յեղափոխական ոյժի — խոշոր առեւտուրի երեսն գալով: Այսելքի հետ ունեցած առեւտրական յարաբերութիւնները չափից գուրս զարգացրին Եւրօպայում հարստանալու տենչը, առանձին նշանակութիւն տեին փողին և առաջին տեղը յատկացրին առեւտրական դասակարգին: Միենոյն ժամանակ հասարակութեան մէջ ներս մուծեցին նոր հայեացքներ, ստեղծւեց նոր կեանք՝ ծնունդ առաւ ժամանակակից ազգայնութիւնը: Առեւտրական դասակարգի շահերը ստիպում են նրան ա-

ւելի ու աւելի լայնացնել իր գործունէութեան սահմանները։ Օգտի համար նա ուղերւեց օտար երկիրներ։ Նրան անհրաժեշտ էր մի այնպիսի ոյժ, որ ոչ միայն պաշտպանէր նրան ամեն տեսակ վիրաւորանքների, ճնշումների և օտարազգի վաճառականների մքցման դէմ, այլ և տար նրան աւելի մեծ օգուա, առաւելութիւններ և ննարաւոթիւն հեշտութեամբ շահագործելու օտարազգիներին։ Պարզ է, որ այդ ոյժը կարող էր լինել վաճառականի համար այն համայնքը, որին ինքը պատկանում էր։ Որքան աւելի է զարգանում արտաքին առևտուրը, այնքան աւելի յաճախ են ընդհարւում իրար հետ զանազան համայնքներին պատկանող վաճառականների շահերը օտար շուկայի վերայ։ Այստեղ աւելի մեծ առաւելութիւններ պէտք է ստանային այն վաճառականները, որոնց յետեռում կանդնած էր աւելի մեծ ոյժ, աւելի ազգեցիկ համայնքներ։ Անհրաժեշտ եղաւ կազմել մեծ և ուժեղ հասարակական կազմակերպութիւն, զարգացնել ազգութիւնը։ Դա ոչ միայն անհրաժեշտ էր, այլ և անխուսափելի, քանի որ հէնց իրենց հայրենիքում վաճառականները դարձան տիրող տարր, իսկ առևտուրը — գերակշու ոյժ։ Այդպիսով առևտրական շահերը դարձան և ազգային շահեր, իսկ զանազան ազգի վաճառականների շահերի հակադրութիւնները օտար շուկայի վերայ — ազգային հակադրութիւններ։

Մինչև օրս էլ այդ հայեացքները պահպանել

են իրենց ոյժը. մեզ մօտ էլ հայրենասիրութեան պաշտպանները հանդիսանում են առևտրական շըրջանները։ Որքան մեզ յայտնի է, այդ ուղղութեամբ ամենից առաջ են գնացել գերմանացի վաճառականները։ «Kölnische Zeitung»-ի արտասահմանեան թղթակցութիւնները տալիս են Փարիզի, Լոնդոնի և այլ գերմանական «գաղութներում» տիրող ոգու ամենամիշտ պատկերը։ Գերմանացի վաճառականը կատարեալ հիմք ունի «ազգայնութեան» մասին գոռալու։ Նրա գրութիւնը համաշխարհային շուկայի վերայ միանգամայն ցաւալի էր. մինչև անզամ հարաւաֆրիկական հասարակապեատութիւնները թոյլ էին տալի իրենց բարձրից նայել նրա վրայ։ Իսկ երբ վերականգնեց գերմանական կայսրութիւնը, վաճառականն էլ դարձաւ ամենայարգելի անձնաւորութիւն, որի հետ ոչ ոք չէր համարձակւում ոտք ձգել, քանի որ նա գտնուում էր առևտրական նպաստաւոր դաշնագրերի հովանաւորութեան տակ։ Հազիւ թէ որևէ աեղ, որևէ դասակարգին «ազգային միութիւնը» այնքան օգուտ տւած լինի որքան գերմանական վաճառականական դասակարգին։ Ներքին առևտուրը դարձաւ ազգային զարգացման յետագայ գործօնը։ Նա միացրեց զանազան համայնքների շահերը և այդպիսով այդ համայնքները կախումն ստացան մօտակայ առևտրական կենդրոնից։ Դրա շնորիւ առևտրական կենդրոնը հարստանում և ուժեղանում է, միւս մասերի վերաբերմամբ ձեռք է բերում

թէ տնտեսական, թէ քաղաքական և թէ մտաւոր գերակշռութիւն։ Նրա լեզուն զարգանում է և աւելի ու աւելի տարածւելով, դառնում ազգային լեզու։

Զարգացման այդ պրօցէսը աւելի ևս ուժեղանում է, երբ կազիտալը առևտրի հետ միասին իրան է հպատակեցնում և ապրանքների արդիւնաբերութիւնը։ Կազիտալիզմի վերջնական յաղթութեամբ և տիրապետութեամբ անձնական սպառման արդիւնաբերութիւնը հասնում է մինիմումի, իսկ ապրանքային արդիւնաբերութիւնը դառնում տիրապետող։ Դրա հետ զուգընթացարար քանդում է և համապատասխան հասարակական կազմը—համայնքը, նահապետական ընտանիքը—և իւրաքանչիւր անհատի բարեկեցութիւնը աւելի մեծ կախումն է ստանում ամբողջ ազգի բարեկեցութիւնից և ոյժից։ Ներքին և արտաքին շուկաների համար նշանակած ապրանքների կազիտալիստական արդիւնաբերութիւնը յետ է մղում գիւղացու սեփական սպառման տնային արդիւնաբերութիւնը։ Որքան աւելի բարձր է կանգնած արդիւնաբերութիւնը, որքան մեծ է արտահանութեան քանակը, որքան աւելի նպաստաւոր են առևտրական դաշնագրները, որքան աւելի շատ օգուտ է ստանում կազիտալիստը—այնքան աւելի բարձր է գիւղացու իր արդիւնքների համար ստացած վարձը, այնքան աւելի մեծ պահանջ է զգացւում հացի, գինու,

մսի, կաշու, վշի և այլն և այն։ Այդպիսով գիւղացին էլ հանդիսանում է ազգային միւլթեան և ոյժի մէջ իրեւ շահագրգուռած կողմ։ Աւատականութեան և մարկերի հետ միասին անհետանում է ասպետական գօրքը։ Հետևակ գօրքը սկսում է կազմել գօրքի գլխաւոր ոյժը։ Նա նորից դառնում է գիւղացիական։ Սկզբում միայն անհող գիւղացիները, լանգսկնեխտներն էին գընում զինւոր, բայց շուտով սկսեցին հողատէր գիւղացուն էլ բաժանել նրա զութանից։ Գիւղացին էլ է սկսում կռւել ազգային միւլթեան և ոյժի համար։ Նայելով թէ պատերազմը զինաստիական էր թէ առևտրական—ըստ այնմ էլ ղեկավարները հանդիսանում էին կամ պալատականները, կամ քաղաքները։ Զօրքի մէջ՝ չքանում են գիւղացու առանձնայատկութիւնները, իսկ պատերազմի դաշտում նա լցւում է բուռն ատելութեամբ դէպի թշնամի ազգերը։ Այդպիսով գիւղացին էլ սկըսում է աւելի մօտ մասնակցութիւն ունենալ ազգային կեանքում և վերջինս դուրս է զալի քաղաքի սահմաններից։ Մինչեւ անգամ բանւոր դասակարգի ստորին խաւերն են սկսում մասնակցել ազգային կեանքում։ Այդ ստորին խաւերը արդէն ոչ թէ ճորտեր, կենդանի ապրանքներ են—այլ ազատ պլոյէտարքներ։ Արդիւնաբերութեան կապիտալիստական ձեր չէր կարող զարգանալ, եթէ չ'կնէին մարդիկ, որոնք առանց ճնշելու ամեն տեսակ ճորտական և համբարական կապանքներից,

ազատ գործադրէին իրենց բանւորական ոյժը:

Քանի որ կոխւը ուղղւած էր աւատական տնտեսութեան և աւատականութեան դէմ, պրօլէտարիատի և բուրժուազիայի շահերը որոշ չափով համապատասխանում էին իրար: Աւատականութեան ճնշող կապանքները որ չափով ճնշում էին կապիտալիստական արդիւնաբերութեան զարգացումը, նոյն չափով էլ ճնշում էին վարձու բանւորին, թոյլ չ'տալով նրան վաճառել իր բանվորական ոյժը ճնար եղածին չափ թանգ: Մըդիւնաբերութեան զարգացման հետ միասին, շնորհիւ նրա թէ երկրի ներսում և թէ արտասահմանում գրաւած նոր ու նոր շուկաների աճում է և բանւոր ոյժի պահանջը, հետևապէս և բանւորների համար ստեղծում էր որոշ ճնարաւորութիւն բարձրացնելու իրենց օրավարձը: Այդ երևոյթը առանձնապէս աչքի է ընկնում արդիւնաբերութեան մանուֆակտուրային շրջանում, եթ արդիւնաբերութեան գործում բանւորները աւելի մեծ գեր էին խաղում, քան մեքենաները:

Թէ ներքինյարաբերութիւնների և թէ արտահանութեան վերաբերմամբ գործ դրած իւրաքանչիւր մի ճնշում, իրաքանչիւր աննպաստ առետրական դաշնագիր, մի խօսքով այն ամենը, ինչ թուլացնումէր ազգի միութիւնը և ոյժը, աննպաստ ազգեցութիւն էր ունենում և բանւորի գրութեան վերայ. ընդհակառակը, ազգային միութեան և ուժեղացման համար արւած իւրաքանչիւր նոր

քայլ բանւորների համար էլ կազմում էր մի քայլ առաջ: Ոչ այնքան հեռու անցեալում անզղիական բանւորները, որոշ հանգամանքների շնորհիւ, իրանց միանգամայն համերաշխ էին դգում անզղիացի կապիտալիստների հետ և հանդիսանում էին զուտ ազգային քաղաքականութեան կողմնակիցներ:

Ժամանակակից պրօլէտարեատը կազմում է զիլիաւորապէս զիւղացիներից և արհեստաւորներից: Գիւղացու և արհեստաւորի տեղական, սահմանափակ պարտիկուլիարիզմը անհետանում է, երբ վերանում են թէ համբարական կապանքները և թէ զիւղացու՝ հողի հետ ունեցած պարտադիր կապը: Գիւղացին և համբարական քաղաքացին իրենց համայնքներից գուրս մնում են օդում կախւած: Հենց այդպիսիներին է վերաբերում գերմանական առածը՝ «bleib'in der Heimath und nähere dich redlich»¹⁾: Պրօլէտարեատը և մանաւանդ անհող զիւղացին, եթէ մինչեւ անգամ մնայիր համայնքում, հազիւ թէ կարողանայ բարելաւել իր գրութիւնը: Նրանց համար պէտք է բաց լինեն ազգացին բոլոր երկիրների գումերը, որպէսզի այդպիսով կարողանայ որքան կարելի է թանգծախել իր բանւորական ոյժը: Այդպիսով եթէ աչքի առաջ չ'ունենանք միւս բոլոր հանգամանքները, միայն պրօլէտարեատի ազատ տեղափո-

¹⁾ Մնացիր հայրենիքում և ազնիւ աշխատանքով հայթայթիր ապրելուդ միջոցները:

խութեան պահանջը նրան դարձրեց մի դասակարգ, որի շահները, բուրժուազիայի հետ միասին պահանջում էին ազգային միութիւն։ Այդ գիծը ամենից քիչ էր յատուկ ճորտական դրութեան։

Այդպէս ուրեմն տնտեսակական զարգացման շնորհիւ **XIV**-րդ դարից սկսած կամաց կամաց զարգանում է ժամանակակից ազգայնութիւնը, հետալզնեան ընդգրկելով ժողովուրդի բոլոր դասակարգերը։ [Ժամանակակից ազգայնութիւնը, ապրանքների կապիտալիստական արդիւնաբերութեան զաւակն է։ հետևապէս և առևտրական յարաբերութիւնների պայմանները միևնոյն ժամանակ հանգիստանում են և նրա ծագման ու զարգացման բնորոշ պայմաններ։]

Ազգի զարգացման պայմաններից մէկն էլ երկրի աշխարհազրական դիրքն է։ Անանցանելի եռնաշղթանները, մեծ և նաւագնացութեան անյարժամար գետերը դժւարացնում են նախնական համայնքների միացումը մի ազգի մէջ։ Իսկ նաւագնաց գետերը իրենց վտակներով, ընդհակառակը, նպաստում են նրանց ջրաբաշխում գտնած համայնքների միացման։ Այնտեղ, որտեղ կազմակերպւել է ազգը, կամ թէ չէ նրա սաղմը, երկրի առևտրական-աշխարհազրական դիրքի հետ միասին առանձին նշանակութիւն է ստանում և նրա պատերազմական դիրքը։ Ժամանակակից ազգերի ամենազիստառը հոգսերից մէկն է այնպիսի ստիմանների մէջ ամփոփել երկր-

ը, որոնք հարեանների յարձակումներից պաշտպանւելու համար ներկայացնում են որոշ դիւրութիւններ։ Դրանով է բացատրուում, որ ֆրանսիացիք չեն կարողանում մոռանալ էլլզասի կորուստը, քանի որ չըկնոս և Վօգեզա գետերը հանգիստանում են Փարիզի միակ բնական պատճեններ։ Ոչ մի արւեստական ամբութիւն չի կարող պաշտպանել Փարիզը յարձակումներից այնպէս, ինչպէս այդ բնական պատճենները։ Եւ եթէ իտալիան աւելի շատ ձգուում է ձեռք բերել Տրենտինօն, քան թէ Կօրսիկան, Սավոյեան և Տեսինան, և աչք ունի հարաւային Տիրոլի ոչ միայն իտալական, այլ և գերմանական մասերի վերայ (որոշ կարգի իտալացիների համար «չ'ազատւած իտալիան» ձգւում է մինչև Բրիններ) դա բացատրուում է նրանով, որ Տրենտինօն ամենայարմար կէտն է, որտեղից կարելի է յարձակւել իտալիայի ամենաարդիւնաբեր և ամենահարուստ մասերի վերայ և իսկապէսնա հանգիստանում է իբրև մի նիզակ, որ ցցւած է հիւսիսային իտալիայի մարմնի մէջ։ Այդ պատճառների շնորհիւ յաճախ, որևէ ազգի իր երկրին միացնում է այնպիսի նահանգներ, որոնք դէմ են այդպիսի միացման և որոնց տնտեսական շահերը միանգամայն հակասում են տիրողների շահերին։ Բայց շատ յաճախ քաղաքական միացումից առաջանում է տնտեսական միացում—այդ դէպքում տիրուած նահանգը ձուլում է տիրող ազգի հետ։

Այնուամենայնիւ, ազգի կազմակերպութեան գործում զիմաւոր գէրը խաղում է այն գործոնը որ հանդիսանում է և յարաբերութիւնների ամենաանհրաժեշտ պայմանը — այն է լիզուն: Առանց փոխագարձ հասկանալու, առանց լեզվի անհնար է հասարակական արդիւնաբերութիւնը: Որքան աւելի զարգացած և անկայուն է արդիւնաբերութեան ձեզ, այնքան աւելի մեծ է միևնոյն լեզվով խօսող մարդկանց թիւը, այնքան աւելի հարուստ և բազմակողմանի են որոշ տեղերի բառարանները — որոնք ուրիշ տեղերի համար, ի հարկէ, կարող են ենթարկել խոշոր կրծատումների: Լեզուների տարբերութիւնը հասարակական յարաբերութիւնների և հասարակական արդիւնաբերութեան զիմաւոր խոչնոտներից մէկն է: Այդ պատճառով, բնական է, որ ապրանքային արդիւնաբերութեան և առևտին յաջողւէր միացնել մի ազգութեան մէջ այն հասարակութիւնները, որոնց անդամները առանց դժւարութեան հասկանում էին իրար: Ի հարկէ, մեզանից իւրաքանչիւրը կ'գերազասի աշխատել և առհասարակ տնտեսական յարաբերութիւնների մէջ մըտնել նրանց հետ, որոնց հետ կարող է խօսել: Որքան աւելի առաջ է գնում ժամանակակից տնտեսական զարգացումը, այնքան աւելի միևնոյն լեզվով խօսող մարդիկ մեծ պահանջ են զգում կազմել մի առանձին պետութիւն, վերացնել իրար բաժանող սահմանները և ազատուել նրանցից, որոնց հետ լե-

զուների յարաբերութեան պատճառով կամ միանգամայն անհնար է յարաբերութիւնների մեջ մըտնել, կամ թէ չէ շատ դժւար:

Ժամանակակից ազգութիւնները ծագել են միանգամայն տարբեր ազգեցութիւնների տակ, որոնք երբեմն չէզոքացնում էին իրար, երբեմն ուժեղացնում: Ժամանակակից ազգերից ոչ մէկի ծագումը նման չէ միւսի ծագման, բայց և այնպէս նրանցից իւրաքանչիւրը միենոյն տնտեսական զարգացման, ապրանքների կասխափառական արդիւնաբերութեան և առևտուրի ծնունդէ: Ի հարկէ ժամանակակից ազգութիւնը, կ'լասիկ և արևելան ազգութիւններին հակառակ, ընդզրկում է ազգաբնակութեան բարորդակերը մինչդեռ օր. արևելքի ստրակները և մեծ մասամբ գիւղացիները միանգամայն ենուու էին ազգային կեանքից և երբէք շահագրգուած չէին աղջային միւսութեան և ոյժի մէջ: Բայց և այնպէս ժամանակակից ազգայնութեան զաղափարը իր էութեամբ բուրժուազիական զաղափար է: Բուրժուազիան և ժամանակակից ազգայնութիւնը ծնունդ առան միևնոյն հողի վերայ և մէկի զարգացումը նոլաստում էր միւսի զարգացման և ընդհառակը: Այդ պատճառով բուրժուազիայի և ազգայնական զաղափարի գէրերը համապ ստասխանում են իրար:

Բայց գոյնիք!

II

Փամանակակից պետութեան կլասիկ ձեր—
ազգային պետութիւնն է։ Բայց բոլոր «կլասիկ
ձերը» գոյութիւն ունեն իբրև տենդենցիաներ,
որոնք միայն երբեմն են լիապէս իրականանում։
Օրինակ, ժամանակակից արդիւնաբերութեան կլա-
սիկ ձեր համարում է խոշոր կապիտալիստական
արդիւնաբերութիւնը, բայց և այնպէս նրա կող-
քին առայժմ գոյութիւն ունեն նաև արդիւնաբե-
րութեան նախնական ձերի բազմաթիւ մնացորդ-
ներ։ Ճիշտ այդպէս էլ ներկայումս, գոյութիւն
չ'ունի ոչ մի հատ զուտ ազգային պետութիւն—
մի պետութիւն, որը ընդգրկեր ամբողջ ազգը և
միևնույն ժամանակ չ'պարունակեր իր մէջ ուրիշ
ազգի անհատներ։ Այդ պատճառով ինչպէս ժա-
մանակակից պետութիւնների, նոյնպէս և առան-
ձին ազգութիւնների կազմւելը չի կարելի համա-
րել վերջացած։

Եւրօպայի համարեա բոլոր պետութիւնները
հիմնած են ազգայնական սկզբունքի վերայ։ Իսկ
Շվեյցարիայի գիւղական հանրապետութիւնը, որ
մինչև անգամ չ'ունի մայրաքաղաք, կամ Հարս-
բուրգեան միապետութիւնը չեն կարող համարւել
ժամանակակից պետութիւններ, որովհետեւ հիմն-
ած չեն ազգայնական սկզբունքի վերայ։ Աւտո-

րիական երկրների միութիւնը երբէք տնտեսա-
կան զարգացման արդիւնք չէ։ Դրանք երբէք տըն-
տեսական մի ամբողջութիւն չեն ներկայացրել։
Միայն տաճիկների երկիւղը, որոնք XV դարից
մինչև XVII դարերը սպառնում էին հարաւային
սլավոններին—հունգարներին, չեխներին, հարաւ-
արևելեան գերմանացիներին, միայն այդ երկիւղը
ստիպեց նրանց միանալ։ Նրանք բոլորն էլ ան-
խուսափելի կերպով կ'կորչէին, եթէ իրենց բոլոր
ոյժերը զնէին մի ընդհանուր առաջնորդի, հա-
բարբուրգեան կառավարութեան, տրամադրութեան
տակ։ Հաբսբուրգները հանդիսացան իբրև առաջնա-
կարգ մարտնչողներ կիսալուսնի դէմ։ Նրանց տա-
պալումը մեծ վտանգի կարող էր ենթարկել ամենից
առաջ Գերմանիային։ Գերմանական ազնւական-
ները երբէք այնքան շվեդացիներից, ֆրանսիա-
ցիներից չեն վախեցել, որքան տաճիկներից։ Մի-
ակ իրական պարտականութիւնը, որ պէտք է կա-
տարել գերմանական կայսրը և որ թողել էին
նրան իբրև ժառանգութիւն գերմանական թա-
գաւորները—դա տաճիկներին իրանցից որքան կա-
րելի է հեռու հետ մղեն էր։ Դրա հետևանքը եղաւ
այն, որ Գերմանիայի կայսերական տիտղոսը դար-
ձաւ Հաբսբուրգեան տան մէջ ժառանգական։ Իսկ
երբ անցեալ դարում, տաճիկների երկիւղը մի-
անգամայն վերացաւ, դրա հետ միասին քանդւեց
և գերմանական ազգի հոռմէական կայսրութեան
վերջին հիմնաբարը։ Ֆրանսիական յեղափոխու-

թիւնը ուրիշ շատ ուրուականների հետ միասին ոչնչացրեց և այդ ուրուականը: Տաճիկների երկխողի հետ միասին վերացաւ և աւստրիական երկրները միացնող կապը դրա փոխարէն սկսեցին զարգանալ կենդրոնախոյս տեսդենցիաներ:

Աւստրիայի պետական մարդիկ աշխատում էին և աշխատում են այդպիսի բաժանմուն առաջըն առնել համաւստրիական ամբողջական ազգութիւններ ստեղծելով: Այդ նոյն նպատակին էին ծառայում թէ զարոցը, թէ բլուրօկրատեան և թէ զօրքը: Եթէ դրա հետ միասին չ'ձգտեն վերածել ամբողջ Աւստրիան մի ընդհանուր անտեսական օրգանիզմի, մի կենդրոնով, որ իշխէր նրա ամբողջ կեանքի վերայ, միւս բոլոր միջոցները կը տան միայն ողորմելի հետևանքներ: Աւստրիայի այդպիսի միացման մասին խօսք անգամ չի կարող լինել դրա փոխարէն, ընդհակառակը, կարծես խզում է նրա զանազան անտեսական շըրջանների մէջ եղած կապը: Վէճան, որ պէտք է ամբողջ Աւստրիայի տնտեսական կեանքի կենդրոնը լինէր, զգալի կերպով կօրցնում է իր նշանակութիւնը: Հունդարիայի և սահմանակից նահանգների, Շվեյցարիայի և հարաւային Գերմանիայի ու Ֆրանսիայի հետ ունեցած հացի առետուրը աւելի և աւելի կենդրոնանում է ոչ թէ Վէճայում, այլ Բուղապէշտում: Միւս կողմից բռն աւստրիական արդիւնքների առետուրը արենքի հետ մեծ մասամբ ուղղում է Տրիեստի կամ

Բուղապէշտի վերայով և Վէճայի միջնորդութեան ոչ մի կարիք չի զգացւում: Հիւսիսային, խոշոր արդիւնքերական, Բոհեմիան միանգամայն առանձին նահանգ է, որ ոչ թէ միայն լեզւով, այլ և իր աշխարհագրական դիրքով, իսկ ելքայի առետրական ճանապարհի շնորհիւ, նաև անտեսապէս սերտ կերպով կապւած է Գերմանիայի հետ: Նախ և առաջ այստեղ «գերմանական ազգային շարժումը» զգում է իրան ինչպէս իր տանը: Իսկ նոյն Գերմանիայի գիւղական—ալ' պիտական երկրները, ընդհակառակը մինչև օրս պահպանել են իրենց միջնազարեան պարտիկուլիարիզմը: Այդ պարտիկուլիարիզմը այնքան աւելի է զարգացած, որքան աւելի ենք հեռանում կայսրութեան մայրաքարից և որքան ըիչ է զարգացած ազգային գաղափարը: Օքինակ տիրոլցին, իր հարևան շվեյցարացու նման, որ կանգնած է անտեսական զարգացման միենոյն աստիճանի վերայ, ամբողջովին վարակւած է մինչև օրս էլ Բոհեմայում տիրող, պարտիկուլիարիզմով: Այդպիսով, գերմանացիք Աւստրիայում մի ամբողջական անտեսական նահանգ չեն ներկայացնաւմ: Միենոյն ժամանակ Աւստրիայում մենք տեսնում ենք և միանգամայն առանձին նահանգներ, օր. Հունգարիա, Դալմացիա, Պալիցիա որոնցից վերջին երկուսը, իրենց թէ լեզւով և թէ աշխարհագրական տնտեսական պայմաններով, Բոհեմիայի նման հակում են զէպի հարկան օտար պետութիւնները: Վերջապէս մի

կողմից գերմանական—հիւսիսային Բոհեմիայի և
ալ'պիական, միւս կողմից. լեհական նահանգների
և Հունգարիայի մէջ մենք դատում ենք մի օրիգի-
նալ նահանգ, որը չ'ունի ճշտութեամբ որոշած
սահմաններ և որ բնակեցրած է չեխերով։ Ներ-
կայումս սրբան աւելի սուր կերպարանք են ըն-
դունում տնտեսական ներհակութիւնները Աւտորի-
այում, որքան իւրաքանչիւր տնտեսական նահանգ
ձգտում է աւելի ևս զարգացնել իր քաղաքային
կամ գիւղական արդինաբերութիւնը և որքան ա-
ւելի քիչ է յաջողուում նրան առաջ տանել այդ
զարգացումը առանց իր հարեան երկրների տըն-
տեսական զարգացման վնասելու, այնքան աւելի է
մեծանում Աւտորիայի զանազան տնտեսական նա-
հանգների մէջ եղած անդունդը, այնքան աւելի
քիչ յաջողութիւն է խոստանում ազգերի «հաշ-
տեցման» քաղաքականութիւնը, մինչև անզամե-
թէ յաջողուի մի կերպ լուծել «լեզուների հարցը»։

Թանի որ գեռ իս գոյութիւն ունեն տնտե-
սական հակասութիւնները, միայն «լեզվի հարցով»
չի կարելի վերջնականապէս վերացնել ազգային
ներհակութիւնները. դրան ամենազեղեցիկ ապա-
ցոյց մենք տեսնում ենք իրանդիայում։ Արդէն
հինգ դարուց աւելի է իրանդիան կազմում է
անգղիական երկիր¹⁾։

¹⁾ Իրանդիայի միացումը սկսել և չենրիխ II-ից 1769 թ.
բայց միայն 400 տարուց յետոյ անգղիացիներին յաջողւց վերջնա-
կանապէս տիրել։

Կրօմվելից սկսած, երկու դար շարունակ,
անընդհատ, վայրագ անողորմութեամբ, աշխա-
տում էին ոչնչացնել իրանդական ազգութիւնը
և անգղիականացնել իրանդիան։ Անգղիերէնը դար-
ձաւ իրանդիայի լեզու, անգղիական դարձաւ նաև
իրանդիայի գրականութիւնը, գիտութիւնը, գե-
ղարւեստը, ի հարկէ այն չափով, ինչ չափով այդ
բոլորը գոյութիւն ունէին այդ թշւառ կղզու վրայ։
Այնուամենայնիւ իրանդացիների և անգղիացինե-
րի մէջ դեռ շարունակում են գոյութիւն ունե-
նալ ազգային ներհակութիւններ, և հաշտութիւ-
նը կարող է կայսնալ միայն այն ժամանակ, երբ
Մեծ-Բրիտանիան կ'վերադարձնի իրանդիային
նրա ազգային անկախութիւնը։ Այդ երկու երկր-
ների տնտեսական ներհակութիւնները գեռ ևս
գոյութիւն ունեն։ Իրանդիան երբէք Անգղիայի
մասը չի եղել, նա եղել է միայն նւաճւած մի-
գաղութ, որ ամեն կերպ աշխատում էին շոհա-
գործել, մի մրցակից, որին ամեն կերպ ձգտում
էին չեղոքացնել։ Ամեն տեսակ խոչնդուներ էին
գնում իրանդիայի տնտեսական զարգացման ա-
ռաջ, ոչնչացնում էին նրա մանուֆակտուրիան,
փչացնում էին նրա ընդունակութիւնը, ազ-
գարնակութիւնը պահում էին մշտական աղքա-
տութեան և տգիտութեան մէջ։ Իրանդիայի վե-
րաբերմամբ հետևում էին ճիշտ այն քաղաքականու-
թեան, ինչ քաղաքականութեան հետևում էին և
ամերիկական գաղութների վերաբերմամբ։ Բայց

Իրլանդիան տւելի մօտ և տւելի թոյլ էր քան աշմերիկական գաղութները: Իրլանդիան չկարողացաւ ձեռք բերել իր ազգային անկախութիւնը; հետեւապէս և իր տնտեսական զարգացման ազատութիւնը: Միւս կողմից նա չ'կարողացաւ կազմել անգլիական տնտեսական օրդանիզմի մի մասը, մասնակցել և օգաւել Անգլիական տնտեսական զարգացումից:

Աւատրիայի օրինակը պարզ ցոյց է տալի, թէ որքան քիչ բաւարարութիւն կարող է տալ ժամանակակից զարգացման պահանջներին մի ոչ ազգային պետութիւն: Իսկ Իրլանդիայի օնինակից մենք տեսնում ենք, թէ որքան ժողովուրդի տընտեսական բարօրութիւնը — երբ նա սկսում է իր քաղաքացիական զարգացումը՝ սերտ կերպով կապւած է աղդային, ինքնուրոյն, առանձին պետութիւն կազմելու հետ: Փաստերի համար հեռու կարիք չ'կայ գնալու: Գերմանիան և Իտալիան կարող են ծառայել իրեւ տմենապերճախօս փաստ Գերմանիայի և Իտալիայի տնտեսական զարգացումը խախտւեց XVII-րդ, դ. որովհետեւ երբ գտնւեց ծովային ճանապարհը դէպի Հնդկաստան (Աֆրիկայի շուրջը), երբ բացւեց Ամերիկան, առետուրը Միջերկրական ծովի ափերից տեղափոխւեց Ատլանտիսն ովկիսմոսի վերայ: Իտալիան, հարաւային Ֆրանսիան և հարաւային Գերմանիան, որոնք դեռ XV դարում Եւրոպայի տնտեսական զարգացման վլուխ էին կանգնած, տեղի

տվին Պօրտուգալիայի, Իսպանիայի, հիւսիսային ֆրանսիայի, Նիդերլանդիայի և Անգլիայի առաջ: Տնտեսական դադարման (Յաստոյ) շորհիւ թուլացաւ և ազգային զգացմունքը: Այդ բանը, Գերմանիայում և Իտալիայում աւելի զգալի էր XV-րդ դարում, քան XVII-րդ դարում: առանձին մանր պետութիւնների և քաղաքների վերածւելը և նըրանց միջի տարբերութիւնները գարձան այդ երկու ազգերի տիպիքական առանձնայատկութիւններ: Այդ անզօր հատւածները օտար պետութիւնների ձեռքին զարձան խաղալիք և բարի հարկանները, ընականաբար, ամեն կերպ աշխատում էին պահպանել նրանց ազգային բաժան բաժան լինելը և անտեսական յետամնացութիւնը, հակառակ դէպքում կարող էին առաջ գալ նոր մրցակիցներ և հակառակորդներ: Տնտեսական յետամնացութեան շնորհիւ նոքա բաժան բաժան եղան, կորցրին իրենց իքնուրոյնութիւնը, որ իր կողմից դարձաւ տնտեսական զարգացման նոր խոչնդուս: Սկսեցին ներս մուծւել օտարերկրեայ ապրանքներ, որոնք մրցում էին տեղական ապրանքների հետ: Առևտուրը աստիճանաբար յետ մղեց սեփական սպառման արդիւնաբերութիւն: Գիւղացիները և արհեստաւորները թէ՛ւ իրենց կարգին անցնում էին պրօլետարիատի շարքերը, բայց չըկար կապիտալիստական արդիւնաբերութիւն որ ֆրանսիայի և Անգլիայի նման, շահագործէր նըրանց իրեւ վարձու բանուրների: Կապիտալիզմի

գարգացման սկզբնական շրջաններում գործարան բանալը մի խսկական բարերարութիւն էր և գործարանատէրը հանդիսանում էր իբրև մարդկութեան բարերար: Իսկ անտեսական գարգացման դէմ հանած իւրաքանչիւր նոր խոչնորու դեռ ևս չէր նշանակում, թէ այդպիսով պահպանում են և նահապետական կազմի երջանկութիւնները. այդ խոչնորաների միակ հետեւանքը լինում էր այն, որ սպառանքային խոշոր և առողջ կապիտալիստական արդիւնաբերութեան տեղ բռնում էր մի ողորմելի տնտեսութիւն, որը միանալով աւատականութեան զանազան մնացորդների հետ դառնում էր նոյնքան յաւակնոտ, որքան և ծիծագելի: Գերմանիայում, XVII և XVIII-րդ դարերում, կարելի է տեսնել այդպիսի տնտեսութեան շատ օրինակներ, որոնք ոչնչով չեն զիջում իտալականին:

Ով կրում է վնասներ, նա պէտք է հաշտուի և նախատինքի հետ, այդ պատճառով էլ, զարմանալի չէ, որ հէնց այն հարևանները, որոնք օգտաելով իրենց գերակշռութեամբ, ամեն կերպ աշխատում էին դանդաղեցնիլ ազգի տնտեսական գարգացումը, բոլորովին ջնջել նրան, հէնց նոքա էլ իրենց ծաղրի առարկայ էին դարձնում այդ ազգը: Այն ամենը, ինչ արին ֆրանսիացիք մեր վերաբերմամբ, այդ բոլորը, մենք ինքներս արինք մեծ ուրախութեամբ իտալացիների և լեհացոց վերաբերմամբ, որոնք մեզանից աւելի թոյլ լինելու դժբախտութիւն ունէին:

Ազգային միութեան և անկախութեան ձրգումներից առաջ եկած պատերազմը ամբողջ դաքարբեր է ինչ շարունակւում է: Դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ կենդրոնացման կողմանկիցների և պարտիկուլիարիստական տարրերի պատերազմ. դա հաստատ և ապահով սահմանների, առևարական շահերի և առաւելութիւնների համար մղւող պատերազմ է. դա ազգերի գոյութեան կոփւն է: Այդ պատերազմը իր գոյութեան ընթացքում զանազան ազգերի մէջ ստեղծել է որոշ տրադիցիաներ. մի կողմից ազգակցութեան և տեղական կապակցութեան զգացմունք, միւս կողմից ատելութեան զգացմունք դէպի «Ժառանգական» թշնամիները: Այդ զգացմունքները վերածւեցին բնազգների, նախատրամադրութիւնների, որոնք սկսում են ժառանգաբար անցնել յետնորդներին և բաւական էր մի չնչին առիթ, որպէսզի նրանք երևան գան ամբողջ թափով: Այդպիսով, ազգային զգացմունքը դարձաւ մի գործօն, որը արդէն սկսում է ինքնուրոյն դեր խաղալ երկրի տնտեսական գարգացումից անկախ, իսկ որոշ պայմաններում նաև ի վնաս այդ գարգացման: Պատմական բոլոր կատէզօրեաններին ինչպէս և ազգայնութեան են վերաբերում Գեօտէի հետեւալ խօսքերը՝

«Vernunft wird Unsinn,

«Wohltaht Plage,—

«Weh, dir dass du ein Enkel bist!»

Նորագոյն տնտեսական գարգացման ամենա-

ուժեղ գործօններից մէկը դարձաւ և ժամանակակից հասարակութիւնների ձգտումը միացնող և կազմել առանձին ազգային պետութիւններ։ Բայց առանձնացման այդ ձգտումը, որոշ սահմանից այդ կողմը, յետագայ գարգացման համար դառնում է ոչ միայն աւելորդ, այլ և վեսասակար։

Որքան աւելի է գարգանում արդիւնաբերութեան ժամանակակից ձեր, այնքան աւելի պետութիւնը պէտք է դառնայ ազգային, եթէ ի հարկէ կամնում է բաւարարութիւն տալ նրա բոլոր պահանջներին։ Որպէսզի արդիւնաբերութեան զանազան ճիշդերը կարողանան դիմանալ մրցութեան, պէտք է ուժեղանան, որքան միայն կարելի է պէտք է յայնանան նրանց սահմանները — արտադրեն որքան կարելի է մեծ քանակութեամբ արդիւնքներ, և աճի նրանց մասնաւորումը (ըպէցիալիզացիա)։ Հասարակութեան մէջ աճում է արդիւնաբերութիւնը և աշխատանքի բաժանումը, բայց դրա հետ միասին աճում է և ներքին շուկայի լայնացման պահանջը, այդպիսի մի ուժեղ ազգին պատկանելու անհրաժեշտութիւնը, որ համաշխարհային շուկայի վերայ կարողանար ձեռք բերել առևտրական նորաստաւոր դաշնագրեր։ Դրա հետ միասին հասարակութեան միջին խաւերը աւելի ու աւելի մլում են դէպի պրոլէտարիատի շարքերը, աճում է «մտ ուոր պրոլէտարիատը», որը ձգտում է ստեղծել նոր «տեղեր» կամ գաղթականութեան միջով, կամ աշխատելով վերադարձնել «ազգային

հողի» այն կտորները, որոնք իւրացրել էին հարեան պետութիւնները կամ, վերջապէս, արձակելով ազգային պաշտօններից «ոչ ազգային» տարբերը։ Որքան փոքր է ազգութիւնը, կամ պետութիւնը — ևս առաւել եթէ նա ազգային չէ — այնքան աւելի քիչ կարող է բաւարարութիւն տալ այդ հետզհետէ աճող պահանջներին, այնքան աւելի մեծ պահանջ է զգացւում կամ մեծացնել երկիրը, կամ մտնել հարևան ուժեղ պետութեան կազմի մէջ։ Օրինակ բելգիացի շվեյցարացի գործարանատէրերը որքան էլ իրենց հայրենասէր չ'ձևացնեն, անկասկած նոքաբուռն տենչանք են տածում գէպի Գերմանիան և Ֆրանսիան, որովհետև վերջինները այնքան ուժեղ և ընդարձակ են, որ կարող են իրենց կապիտալիստներին տալ «ազգային աշխատանքի հովանաւորութիւն» և ձեռք բերել նազաստոր առևտրական դաշնագրեր, մինչդեռ բելգիական և շվեյցարական ներքին շուկաները այնքան չնշին են, որ հազիւթէ պահպանողական մաքսերը նրանց համար ունենան զգալի նշանակութիւն։ Բացի դրանից, այդ մաքսերը վատ հետևանք կարող են ունենալ այն մարդոց համար, որոնց յոյսը բացառապէս գրւած է արտահանութեան վերայ և որոնք ամբողջովին ենթարկւած են հարևանների քմահաճոյքին։ Եթէ հունգարացիք և չեխերը այժմ մի տեսակ հիւանդոտ փուլթկոտութեամբ ձգտում են լայնացնել իրենց ազգային նահանգների սահմանները — դա գլխաւորապէս բա-

ցատրւում է նոցա տնտեսական դլութեամբ, որը դրել է նրանց առաջ ալտերնտիւ—կամ դպոնալ մեծ ազգ, կամ բոլորովին կորցնել իրենց տնտեսական, դրա հետ միասին և քաղաքական ազգագային կեանքը: Որքան որ շատ լինի Աւտրիայում չեխերէն խօսողների թիւը, այնքան աւելի շատ սպառողներ կ'ունենան չեխական ինդուստրիայի արդիւնքները: Որքան աւելի շատ լինեն չեխական դպրոցները, դատարանները և այնպիսի հիմնարկութիւնները, որոնեղ զործածւեն չեխական լեզուն, այնքան աւելի մեծ շանս կ'ունենան չեխական բուրժուազիայի որդիքը այդ հիմնարկութիւններում պաշտօններ գտնել: Զնայելով այդ բոլորին, գերմանիզմին չեխերի կողմից ոչ մի վտանգ չի կարող սպառնալ, մինչև անգամ եթէ «գերմանական ազգային» կապիտալիստներին վերջ ի վերջոյ յաջողւի բոլոր գերմանացի բանւորներին փոխարինել սլաւօն բանւորներով, մի բան, որին նորա ամեն կերպ աշխատում են հասնել: Ի ցոյց այլոց կրել գերմանիզմի դիմակը և երբեմն երբեմն շպատել կոպէկի ողորմութիւն որևէ գերմանական Schulverein-ին—ի հարկէ այնքան էլ վնասակար չէ կոտրիտալիստին, քան տալ բանւորին այնպիսի վարձ, որով գերմանացի բանւորը կարողանար պահպանել իր գոյութիւնը. դրա վրայ աւելացրէք և այն, որ առաջնը կարող է ծառայել իբրև արժան բէկլամ, իսկ երկրորդը ոչինչ: Բայց չ'նայելով այդ քաղաքակա-

նութեան, այժմ հազիւ թէ կարելի է լուրջ կերպով մտածել և ձգտել չեխական ազգութեան պահպանան: Որքան էլ արագութեամբ չ'զարդանայ չեխական ազգը, այնուամենայնիւ նրան հազիւ թէ յաջողւի ձեռք բերել այնքան խոշոր տնտեսական շրջան, որը, արդիւնաբերութեան ներկայ պայմաններում, այդ ուղղութեամբ տար նրան որևէ ինքնուրոյնութիւն: Կապիտալիզմը աւելի արագ է զարդանում, քան չեխական ազգը, հետևապէս վերջինն աւելի և աւելի մեծ կախումն պէտք է ստանայ հարեաններից և ամենից առաջ Գերմանիայից: Այսպէս թէ այնպէս, որքան աւելի է մեծանում չեխերէն խօսող մարդոց թիւը, այնքան աւելի են բազմանում չեխական դպրոցները, դատարանները և այլն. այնքան աւելի են մեծանում չեխական ինդուստրիայի և «մտաւոր պրոլետարիատի» ակընկալութիւնները: Բայց այդ ակընկալութիւնները այնքան աւելի լաւ գոյն են ընդունում, որքան աւելի է տարածում նրանց մէջ գերմաններէնը: Մինչև հիմայ չեխերը գերմաններէնի այնքան էլ մեծ կարիք չէին զգում, որովհետեւ նրանց քաղաքացիների աւագ սերունդները բաւական չափով տիրապետում էին այդ լեզվին: Իսկ ստարօ-չեխերը լաւ ընթանելով կապիտալիզմի պահանջները միանգամայն գետակցում են գերմաններէնի անհրաժեշտառթիւնը: Նորա ձգտում են լայնացնել չեխական լեզվի սահմանները, բայց ոչ թէ գուրս մզկուրվ գերմաններէնը: Միայն մլադօ-չե-

խերը, գիւղացիների և մանր բուրժուազիայի այդ ներկայացուցիչներն են գերմանացիների ֆանատիկ թշնամիները, որոնք գերմաներէն չ' գիտենալը համարում են ազգային առաքինութիւն։ Այդ մարդոց համար, ի հարկէ, գերմաներէն գիտենալը տնտեսական անհրաժեշտութիւն չի ներկայացնում. բայց գիւղացիութիւնը և մանր բուրժուազիան իրենց լեզվի հետ միասին դատապարտւած են կորստի։ Որքան աւելի գիւղացիները և մանր բուրժուազիան կ' մղւեն յետին շարքերը, որքան աւելի կ' զարգանայ կապիտալիզմը, այնքան աւելի կ' փոքրանայ չեխերէնի և կ' մեծանայ, գերմաներէնի նշանակութիւնը։ Զեխիայում գերմաներէնի տարածման դէմ բարձրացած ամեն մի պատճէ վերջ ի վերջոյ կ' դառնայ նաև այդ երկրի տնտեսական զարգացման նոր խոչնդուս։ Իսկ չեխական ազգայնութեան զարգացման նպաստելը գեռ եւ չի նշանակում նպաստել և նրա տնտեսական զարգացման։¹⁾ Յամենայն դէմս, չեխերը կարող են իրենց միաթարել ասելով—նոյն վիճակն է սպասում և միւս, մեզանից աւելի մեծ ազգերին։ Խոշոր արդինաբերութեան արտադրող ոյժը աճում է մեծ արագութեամբ. դրա հետ միասին աճում է և այն ազգերի թիւը, որտեղ նաև հանգիսանում

¹⁾ Գերմաներէնը համեմատաբար աւելի արագ կ' տարածւէր Զեխիայում, եթէ գերմանացիք ուժով չ' փաթաթէին չեխերի վիճակը իրենց լեզուն, որը անտում է ոչ թէ չեխերին օգնած լինելու համար, առ նրանց տնտեսական շրջանը իրանց ձեռքը ձգելու նպատակով։

է արդիւնաբերութեան տիրապետող ձև։ Այժմ արդէն իրար հետ մըցում են ոչ թէ մի 3—4 ազգեր, նոյն թւով շուկաների վերայ, ինչպէս ժամանակակից ազգայնութեան զարգացման սկզբնական շրջաններում, այլ բոլոր քաղաքակիրթ ազգերը այժմ դուրս են եկել կուի ասպարէզ, նոռքա բոլորն էլ կուում են ամբողջ երկրագնդի շուկաների համար։ Այդ կուում մասնակցող մարդոց համար մի լեզու միայն դիտնալը դեռ շատ քիչ է։ Ով աւելի շատ լեզուներ գիտէ, նա աւելի մեծ զբաւական ունի յաղթելու իր մի լեզւանի մրցակիցներին։ Եթէ գերմանական արդինաբերութիւնը վերջին ժամանակներս այնքան մեծ յառաջադիմութիւն ունեցաւ համաշխարհային շուկայի վերայ, դա պէտք է վերագրել գլխաւորապէս գերմանացիների կօմօպօլիտ ոգուն, որը յաճախ «նացիօնալիստների» կողմից ենթարկում է խիստ յարձակումների։ Գերմանացի վաճառականների մէջ աւելի է տարածւած օտար լեզուների գիտութիւնը, քան անզինացի և ֆրանսիացի վաճառականների մէջ, որոնք մինչև հիմայ էլ կարծում են, թէ ամբողջ աշխարհը խօսում է նրանց լեզուվ։ Որքան աւելի են զարգանում միջազգային յարաբերութիւնները, այնքան աւելի մեծանում է այդ յարաբերութիւնների համաշխարհային միջոցի—ունիվերսալ լեզվի պահանջը։ Այդ լեզուն ի հարկէ չի կարելի արեւստական կերպով ստեղծել։ Միւս կողմից, մեր ասած պահանջը ոչ թէ ձբդ-

տում է մէկով էլ աւելացնել գոյսութիւն ունեցող լեզուների թիւը, սաեղծելով մի նոր, կասկածելի արժանաւորութեանց լեզու, այլ կրծառել համաշխարհային յարաբերութիւնների համար անհրաժեշտ լեզուների թիւը։ Վօլապիկը¹⁾ հազիւ թէ երբեկցէ դադարի պատմական, մի քանի ընտրեալ-ների լեզու լինելուց։ Աւելի հաւանական է, որ արդէն գոյութիւն ունեցող լեզուներից մէկը դառ-նայ ունիվերսալ։ Մինչև անգամ հիմայ, որպէսզի լինել «կրթւած» և միջոց ունենալ մասնակցելու ժամանակակից տնտեսական և մտաւոր կեանքում, բացի մայրենի լեզուից անհրաժեշտ է գիտենալ և համաշխարհային լեզուներից գոնէ մէկը։ Այդ ան-հրաժեշտութիւնը քանի գնայ այնքան աւելի կը-մեծանայ, և ազգային լեզուները, համաշխարհային լեզուի վերաբերմամբ կ'ըսնեն ճիշտ այն դիքը, ինչ դիրք այժմ բռնած ունեն գաւառաբարբառ-ները գրական լեզուի վերաբերմամբ։ Նոքա աւելի և աւելի կ'սահմանափակւեն ընտանեկան շրջա-նով և այստեղ վերջի վերջոյ կ'ըսնեն հին պա-պական կահկարասիքի նման մի տեղ, որոնք թէն գործածութեան համար անպէտք են, բայց թանգ են գնահատում և պահւում են մեծ խնամքով։ Աւելի և աւելի կ'սկսեն տարածւել այն լեզունե-րը, որոնք գործ են ածւում միջազգային յարա-բերութիւնների խոշոր կենդրուններում՝ Լօնդոնում, Փարիզում, Նիւ-Յօրկում, Բերլինում։ Ի հարկէ

¹⁾ Հնարովի համաշխարհային լեզու:

այդ լեզուներից իւրաքանչիւրն իր հերթին դուրս
կ'մղի միւսին—բայց թէ բնչ յաջորդականու-
թեամբ, այդ ոչ ոք չի կարող նախատեսել: Յա-
մենայն դէպս այս կամ այն լեզուին յաղթութիւն
առողը կ'լինեն ոչ թէ նրա քերականական և հրն-
չիւնական առաւելութիւնները, այլ տնտեսական
պայմանները: Այժմս էլ մանր ազգերը անհրաժեշ-
տութիւն են զգում գուրս գալ ազգային լեզուի
սահմաններից և յարել մի ընդհանուր լեզուին ոչ
թէ միայն տնտեսական յարաբերութիւնների մէջ,
այլ և գրական ու գիտական կեանքում: Հունգա-
րիայում, Բօնեմիայում, Սկանդինավիայում, Դա-
նիայում, Հոլլանդիայնւմ այժմս էլ ամեն մի
նշանաւոր գիտական աշխատանք հրատարակում
է ոչ թէ ազգային լեզուվ, այլ գերմաներէնչկամ
ֆրանսերէն լեզուվ: Ազգային միտումները, անպայ-
մանյաճախ խանգարում են այդ բանը—բայց իհարկ
ի վեսս գարգացման:

Ունիվերսալ լեզուն մի աւելի մեծ պահանջի սիմպում է—մի պահանջի, որը ձգտում է միացնել մի տնտեսական շրջանի մէջ ժամանակակից բոլոր քաղաքակիրթ ազգերին և վերացնել բոլոր ազգային սահմանափակումները։ Նախնական մանր համայնքները իրենք իրենց բաւարարութիւն էին տալիս, արդիւնաբերելով այն ամենը, ինչ հարկաւոր էր նրանց։ Այդ միենուն երկոյթը նկատուում է ժամանակակից ազգերի մէջ, նրանց գոյութեան սկզբնական շրջաններում։


Անկասկած արտաքին առևտուրն ևս իր հերթին
նրանց զարգացման զօրեղ լիթաններից մէկն էր,
բայց թէ այդ առևտուրի ապրանքները միայն
ճոխութեան իրերն էին—այն է թանկագին գործ-
ւածներ, մորթիներ, զարդարանքներ և այլն։ Իսկ
անհրաժեշտ պահանջների բաւարարութիւն տւող
իրերի վերաբերմամբ ամեն մի ազգ ինքնորոյն
տնտեսական շրջան էր։ Այժմ այդ ամենը փոխ-
ւել են։ Ճոխութեան առարկաները միջազգային
առևտուրի մէջ միանգամայն տեղի են տւել ա-
մենաանհրաժեշտ պահանջներին բաւարարութիւն
տւող ապրանքների առաջ։ Սրանից 50 տարի ա-
ռաջ ոչ ոք չէր կարող թոյլ տալ, որ այդպիսի
հսկայական չափեր կընդունեն հացի, կենդանի-
ների, փայտի, քարածուխի, մետաղի միջազգային
առևտուրը։ Ժամանակակից ոչ մի քաղաքակիրթ
պետութիւն բացարձակապէս անկախ տնտեսա-
կան շրջան չի ներկայացնում։ Առանձին ազգերը
քանի գնում աւելի մօտենում են իրար, աւելի
մեծանում է փոխադարձ շփումը ու յարաբերու-
թիւնները, որոնք պահանջում են միացեալ, մի-
ջազգային կանոնաւորումն։ Եթե 60-ական թւա-
կանների սկզբին Միացեալ-Նահանգներում ծագեց
ազատազրական պատերազմ—իսկոյն և եթ դադա-
րեց բամբակի արտահանութիւնը Անգղիայ։ Ան-
գղիայի բամբակագործութիւնը հում նիւթերի ա-
հազին կարիք զգաց և բնականաբար առաջ եկաւ
սարսափելի ճգնաժամ։ Ներկայումս, իւրաքան-

չիւր պետութեան մէջ արդիւնաբերութեան զա-
նազան ճիւղերը նոյնպիսի կախումն ունեն օտար
երկրներից, որպիսի կախումն ունէր այն ժամա-
նակ Անգղիայի բամբակէ արդիւնագործութիւնը։
Պէտք է աչքի առաջ ունենալ և այն հանգաման-
քը, որ արդիւնաբերական պետութիւնների մեծ
մասը կախումն ունի «արտասահմանից», որտեղից
նոքա ստանում են ամենաանհրաժեշտ իրերը։ Այդ-
պիսի հանգամանքներում միջազգային յարաբե-
րութիւնների իւրաքանչիւր ընդհատումը, որ ընդ-
հանուր պատերազմի ժամանակ, այնպիսի մի ճգ-
նաժամ կարող է առաջ բերել, որի առաջ կ'սե-
մանայ մինչեւ անդամ 1862 թ. բամբակագործու-
թեան ճգնաժամը։ Նա կարող է մնանկութեան
հասցնել արդիւնաբերութեան ամբողջ ճիւղեր, և
կ'ծնի այնպիսի մի սով, որի նմանը մեր սե-
րունդը տեսած չի լինի։

Որքան աւելի մի պետութիւն տնտեսապէս
կախումն է ստանում օտար երկիրներից, այնքան
աւելի ընկնում է ներքին շուկաների նշանակու-
թիւնը՝ արտաքին շուկաների հետ համեմատած։
Այժմեան խոշոր արդիւնաբերութեան մէջ աշխա-
տանքի արտազրութիւնը աւելի արագ է աճում,
քան ազգի սպառողական կարողութիւնը։ Արտա-
քին շուկայի լայնացնելը գանում է առաջնա-
կարգ պահանջ։ Բայց շուկայի մեծանալը և լայ-
նանալը աւելի դանդաղ է կատարում, քան աշ-
խատանքի արտադրութիւնը։ Այդ պատճառով մենք

ապրում ենք միջազգային պարբերական գերար-
տազրութեան նախօրէին, ո՞ւ տնտեսական զար-
գացման ամենամեծ խոչնլոտն է։ Ազգային ձրգ-
տումները որքան որ մինչև հիմայ շահաւէտ էին,
նոյնքան այժմ դառնում են աւելի և աւելի ան-
օգուտ և մինչև անգամ վասակար։ Ազգային մի-
ութեան, ինքնուրոյնութեան և ուժեղացման ձրգ-
տումները այլ ևս անկարող են տալ ժամանակա-
կից խոշոր ինդուստրիային բաւականաչափ սպա-
ռումն։ Արդիւնաբերութեան յետագայ զարգացման
համար այժմ անհրաժեշտ է նոր խթան. արտա-
քին և ներքին շուկաների վրայ տիրող մրցու-
թեան տեղը պէտք է բռնի արդիւնաբերութեան
միջազգային կանոնաւորումը։ Այդ կանոնաւորու-
մը պէտք է լինի միջազգային, նախ, որովհետեւ
արդէն անհնար է որևէ ազգի արդիւնաբերու-
թեան ձևի մէջ մտցնել մի փոփոխութիւն, այն-
պէս որ այդ փոփոխութիւնը չ'ազդի միւսների
վրայ և երկրորդ—խոշոր արդիւնաբերութիւնը պա-
հանջում է մի այնպիսի տնտեսական շրջան,
որը ժամանակակից ազգերի սահմաններից շատ
և շատ հեռու է գնում։

22. VIII. 17 ՎԵՐՔ
Wanner



ՀՀ Ազգային գրադարան



NL0194266

